

ԳԻՏԱԿԱՆ ԻՆՅՈՐՄԱՅԻՆ

1. Ա. ՕՐՐԵԼՈՒ ԱՆՎԱՆ ՖԻԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Հոկտեմբերի 1—4-ը Երևանում տեղի ունեցավ Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտական նստաշրջանը, նվիրված ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս, ՍՍՌՄ ԳԱ թղթակից-անդամ, ինստիտուտի գիտական խորհրդատու էդրաս Հասրաթյանի ծննդյան 60-ամյակին:

Մեծ գիտնական Ի. Պ. Պավլովի տաղանդավոր աշակերտ էդրաս Հասրաթյանի անունը վաղուց ի մտել սովետական խոշորագույն ֆիզիոլոգների համաստեղության մեջ: Այդ պատճառով էլ դարձանալի չէր, որ կազմակերպված նստաշրջանին մասնակցելու համար Միության տարբեր քաղաքներից Երևան էին ժամանել բազմաթիվ ֆիզիոլոգներ:

Նստաշրջանը ներածական հակիրճ խոսքով բացեց ՀՍՍՌ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը:

Վ. Հ. Հասրաթյանի կյանքի և գիտական գործունեության մասին ղեկուցումով հանդես եկավ Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտական ղեկավար, ՀՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ պրոֆ. Ա. Ի. Քարամյանը:

Նստաշրջանում, Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի, Երևանի մի շարք ԲՈՒՀ-երի ամբիոնների աշխատակիցների, ինչպես նաև ժամանած հյուրերի կողմից կարդացվեցին ավելի քան 28 ղեկուցումներ, նվիրված արդի նեյրոֆիզիոլոգիայի զանազան հարցերին:

Վ. Ն. Ջեռնիգովսկու ղեկուցման մեջ ներկայացվեց ընդարձակ փորձարարական նյութ, նվիրված կեղևա-ընդերային հարաբերությունների կառուցվածքային և ֆիզիոլոգիական հիմքերին: Ջեկուցման մեջ այն միտքն է արտահայտվում, որ առբերիչ կառուցվածքների կեղևային ներկայացուցչական դոնաները կարող են դիտվել նաև, որպես արտատար կառուցվածքներ: Այստեղ արց է դրվում նաև այն մասին, որ կեղևում ընդերային ֆունկցիաների կետային տեղակայում ու միայն չի կարելի հակադրել դինամիկ տեղակայմանը, այլև դրանք միմյանց լրացնում են:

Դ. Ա. Բիրյուկովը իր ղեկուցումը նվիրեց բարձր նյարդային գործունեության ֆիզիոլոգիայի վիճելի հարցերից մեկին՝ ժամանակավոր կապերի դասարաժանմանը: Հեղինակը մանրամասնորեն կանգ առնելով պայմանական կապերի ֆիզիոլոգիական առանձնահատկությունների վրա, նշեց այն սկզբունքային տարբերությունները, որոնք գոյություն ունեն վերջինների և պայմանական ռեֆլեքսի—որպես ավելի ամբողջական ու որակապես բարձր ռեակցիայի միջև:

Գիտական նստաշրջանի ծրագիրը ընդգրկում էր մի շարք հետազոտություններ, նվիրված բարձր նյարդային գործունեության և ֆունկցիաների կոմպենսացիայի հարցերին, կեղևային, ենթակեղևային և ուղեղիկային գոյացությունների էլեկտրաֆիզիոլոգիայի հարցերին, ինչպես նաև վեգետատիվ նյարդային համակարգության ֆարմակոլոգիայի ու բիոքիմիայի մի քանի խնդիրներին: Ս. Կ. Կարապետյանը ընդհանրացնելով իր կողմից ղեկավարվող կոլեկտիվի մի քանի տարիների հետազոտությունների արդյունքները, ցույց տվեց, որ գյուղատնտեսական թռչունների վերարտադրողական ֆունկցիաների կարգավորիչ մեխանիզմներում առաջատար դերը պատկանում է կենտրոնական նյարդային համակարգության բարձրագույն հատվածների ռեֆլեկտոր գործունեությանը: Մ. Ա. Պանկրատովի ղեկուցումը նվիրված էր զրգոման սյրոցևսի շարժման արագությունը զլխուղեղում: Օդտագործելով պայմանական ռեֆլեքսների և կեղևի էլեկտրական զրգոման մեթոդիկաները, հեղինակը այն կարծիքն է հայտնում, որ մարման սկզբնական շրջաններում զրգոման ճառագայթման արագությունը արտացոլում է կենդանիների գենոտիպիկ առանձնահատկությունները: Պ. Վ. Սիմոնովի և Մ. Ն. Վալուևայի հետաքրքիր ղեկուցման մեջ քննարկվում էին փոխարկման մեխանիզմները մարդկանց մոտ: Ստացված փորձարարական տրվյալները ցույց են տալիս, որ այստեղ փոխարկման բարձր մակարդակը պայմանավորված է այն ռեակցիաների արգելակման փաստով, որոնք կապված չեն էմոցիոնալ դրոնավորված վերարտադրող ռեակցիաների հետ: Ա. Մ. Հովսեփյանի ղեկուցումը նույնպես կապված էր մարդկանց մոտ բարձր նյարդային գործունեության հետ: Պլետիզմոգրաֆիկ մեթոդիկայով ցույց է տրվել, որ զեղորայքային (բարբամիլ) քնից հետո, հետազոտվողների մոտ վեգետատիվ պայմանական ռեֆլեքսները պահպանվում են: Սակայն տեղի է ունենում այդ ռեֆլեքսների շնչառական և սրը-



տային կոմպոնենտների տարաբազմակի: Յա. Մ. Պրեսսմանը նոր տվյալներ ներկայացրեց ուղղակի և հետադարձ պայմանական կապերի մասին: Ա. Ա. Հայրապետյանի զեկուցման մեջ լվացման պայմանական ռեֆլեքսի օրինակով ցույց է տրվում բարձր նյարդային գործունեության մի շարք առանձնահատկությունները, կախված շարժողական լուրջ ռեակցիաների տարրեր էվոլյուցիոն զենեզիսի հետ: Նստաշրջանի մասնակիցները հետաքրքրությամբ լսեցին նաև Գ. Ն. Գրիգորյանի զեկուցումը ամինսպինի հանդեպ ուղեղի զգայունության փոփոխության մասին, կապված կեղևի շարժողական գոնայի, տեսողական թմբիկների և սիմպատիկ հանգույցների հեռացման հետ, և Վ. Զ. Գրիգորյանի զեկուցումը էպիլեպտոման նոպաների պաթոգենեզի մասին:

Ա. Ի. Ռոյտրակի զեկուցման մեջ—գլխուղեղի կեղևի ապիկալ դենդրիտների ֆունկցիոնալ կազմակերպման մասին, հետաքրքիր նոր տվյալներ բերվեցին դենդրիտների էլեկտրական գրգռման հարցի շուրջը: Հեղինակը սուր քննադատության ենթարկեց կեղևի սինապտիկ կազմակերպման մասին այսպես կոչված «բինար» տեսությունը:

Հայտնի է, որ ժամանակակից նեյրոֆիզիոլոգիայում հետազոտական մտքի ուղադրություն կենտրոնում գտնվող նյարդային գոյացություններից մեկն էլ հիպոկամպն է: Այդ հարցին էլ նվիրված էր Ն. Ն. Ջիժիշվիլու հաղորդումը, որտեղ բերվեցին նոր տվյալներ հիպոկամպի և թալամուսի ոչ ապեքսիֆիկ կորիզների միջև եղած կապերի մասին:

Նստաշրջանում լսված Հ. Գ. Բակլավաջյանի և Ֆ. Ա. Աղամյանի զեկուցումներում քննարկվում էին գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևում երկրորդային բիոէլեկտրական ռեակցիաների ֆիզիոլոգիական բնութագիրը մի շարք ֆարմակոլոգիական նյութերի ազդեցության տակ (զանդյերոն, զամմամադինոկարադաթթու և այլն) և, ռետոդենեղում կեղևի առաջնային պատասխանների էլեկտրաֆիզիոլոգիական հետազոտման հարցերը: Պարզվել է, որ երկրորդային պատասխանների մաքսիմալ ֆոկուսը լոկալիզացված է կեղևի ասոցիացիոն զոնաներում: Ապացուցվել է նաև, որ 1-ին սոմատոսենզոր զոնայի մորֆոգենեզը 2-րդ զոնայից ավելի շուտ է տեղի ունենում:

Մեծ հետաքրքրությամբ լսվեցին Լ. Ա. Մատինյանի և Տ. Գ. Ուրդանջյանի զեկուցումները, նվիրված վեգետատիվ և սոմատիկ ֆունկցիաների կոմպենսացիայի հարցերին ֆիլոգենեզում և, այդ պրոցեսներում սիմպատիկ համակարգության նշանակության մասին:

Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտում բազմակողմանի ուսումնասիրություններ են տարվում ուղեղիկի ֆիզիոլոգիայի մասին: Այդ հարցերին էին նվիրված Վ. Վ. Ֆանարջյանի, Ռ. Ի. Պողոսյանի և Մ. Վ. Խանրարյանի զեկուցումները: Այդ հետազոտություններում պարզվել է, որ գլխուղեղի կեղևի վրա ուղեղիկի ազդեցության միջև հիմա հայտնի երկու ուղիներից բացի գոյություն ունի նաև երրորդ ուղի, թալամուսի ոչ ապեքսիֆիկ սիստեմի միջոցով: Հայտնաբերվել է նաև տեսողական անալիզատորի ուղեղային տարրեր մակարդակների վրա, ուղեղիկի ազդեցության մի շարք առանձնահատկությունները:

Ս. Հ. Միրզոյանի և Է. Ս. Գարրիելյանի, Վ. Մ. Ավագյանի ու Է. Վ. Վլասենկոյի զեկուցումներում նոր տվյալներ հաղորդվեցին, ՀՍՍՌ ԳԱ նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում սինթեզված մի շարք պատրաստուկների (զանգլերոն, կվատերոն, բրետիլիում, օկտասպինդին) ֆարմակոլոգիական հատկությունների և ազդեցության մի քանի կողմերի մասին: Հ. Ք. Բունիաթյանի և Է. Ն. Մխեյանի զեկուցումը նոր փորձարարական տվյալներով հարստացնում է Լ. Ա. Օրբելու ուսմունքը սիմպատիկ սիստեմի համընդհանուր ադապտացիոն-տրոֆիկ դերի մասին: Այստեղ ապացուցված է պարանոցային սիմպատիկ հանգույցների կարևոր դերը գլխուղեղում լիսոլիզային և ածխաջրատային փոխանակության մեջ: Հ. Գ. Ստեփանյանի զեկուցումը ամփոփում էր նրա երկարամյա ուսումնասիրությունները որոճողների քաղցածության պիրիդիկայի մասին:

Նստաշրջանի մասնակիցները մեծ հետաքրքրությամբ լսեցին նաև Գ. Պ. Կոնդրատևի զեկուցումը, անոթների լայնացման տեղական մեխանիզմների հարցի շուրջը և Հ. Մ. Զիլինգարյանի զեկուցումը ողնուղեղային և գլխուղեղային նեյրոնների ցիտո-քիմիական մի շարք առանձնահատկությունների մասին:

Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտական նստաշրջանը ցույց տվեց, որ ներկայումս ինստիտուտի գիտա-հետազոտական աշխատանքները բարձրացել են նոր մակարդակի: Ինստիտուտը որոշակի հաջողությունների է հասել նաև հետազոտությունների տեսական և փորձարարական մակարդակի առաջընթացի գործում:

Նստաշրջանի վերջում ջերմ էլույթ ունեցավ հորելյարը:

Ա. Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ